10344

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան
«19» 09 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 189 - 24

Նախաձեռնող՝ **«Ուայդ Գեյթ» ՍՊԸ**
ք. Երևան, Չարենցի փողոց 4/66

Գործունեությունը՝ **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն**
Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 189 - 24

«19» սեպտեմբեր 2024թ.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ուայդ Գեյթ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրույթային փաստաթուղթ
	- շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, անտառկառավարման պլան, գծագրական նյութեր

Ներածական մաս. «Հայանտառ» ՊՈԱԿ–ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի աշխատանքներն իրականացվել են «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ի կողմից՝ անտառային կոմիտեի հետ 2023թ. հունիսի 15-ին կնքված պայմանագրի համաձայն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 21-րդ հոդվածի՝ «Սյունիքի անտառտնտեսության» անտառկառավարման պլանը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում՝ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի վարչական սահմաններում: Անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Գորիս քաղաքում, Երևանից 237 կմ հեռավորության վրա: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 48 կմ է, արևելքից արևմուտք՝ 40 կմ: Անտառտնտեսությունը հյուսիսից սահմանակցում է Գորիսի ենթաշրջանի համայնքային հողերին, հարավից՝ Կապանի ենթաշրջանի համայնքային հողերին, արևմուտքից՝ Սիսիանի անտառտնտեսությանը և ամառային արոտավայրերին:

Սյունիքի անտառտնտեսությունը կազմավորվել է անտառային տնտեսության գլխավոր վարչության կազմում՝ Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության նախարարի 21.07.1954թ. N37 հրամանով, Կապանի անտառտնտեսությունից առանձնացված 11960 հա ընդհանուր մակերեսի վրա կազմավորվել է Գորիսի անտառտնտեսությունը: Երեք անտառպետություններով՝ Գորիսի անտառպետությունը՝ 4442 հա մակերեսով, Տուրուլուի

անտառպետությունը՝ 3258 հա և Արծվանիկի անտառպետությունը՝ 4260 հա մակերեսով: Հայկական ԽՍՀ Անտառային տնտեսության պետական կոմիտեի 27.09.1958թ. N4 հրամանի համաձայն՝ Գորիսի անտառտնտեսությունը վերակազմավորվել է, որի կազմում կազմավորվել է Սիսիանի անտառպետությունը՝ ընդհանուր 3520 հա մակերեսով: Գորիսի նախկին վարչական շրջանի կոլխոզ-սովխոզային հողերից անտառապատման նպատակով անտառտնտեսությանը միացված տարածքների հետ միասին Գորիսի անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 01.01.1968թ. կազմել է 15694 հեկտար: Հայկական ԽՍՀ Անտառային տնտեսության պետական կոմիտեի 14.01.1971թ. N26 հրամանի համաձայն՝ անտառտնտեսության կազմից դուրս է բերվել Սիսիանի անտառպետությունը, որի հենքի վրա կազմավորվել է Սիսիանի անտառտնտեսությունը՝ 3520 հա ընդհանուր մակերեսով: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 27.07.2021թ. թիվ 01-09/193 գրության համաձայն՝ Սյունիքի (Գորիսի) անտառտնտեսության կազմից Արծվանիկի անտառպետությունը հանվել և ընդգրկվել է Կապանի անտառտնտեսության կազմում: Ներկա անտառշինությամբ անտառտնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 14114,0 հա:

2021 թվականից անտառտնտեսությունը կազմված է երկու անտառպետություններից. Գորիսի՝ 8187 հա (58,0%), և Շուռնուխի՝ 5927 հա (42,0%) մակերեսներով:

«Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառուցվածքը

№	Անտառպետության անվանումը	1989		2007		2023թ	
		հա	%	հա	%	հա	%
1	Գորիսի	5128	37,7	6919	41,9	8187,0	58,0
2	Շուռնուխի	4676	34,3	5181	31,3	5927,0	42,0
3	Արծվանիկի	3816	28,0	4430	26,8	-	
Ընդամենը		**13620**	**100**	**16530**	**100**	**14114,0**	**100**

Անտառտնտեսության տարածքները գտնվում են Գորիս, Տաթև և Տեղ խոշորացված համայնքների վարչական սահմաններում: Անտառտնտեսության ներքին սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ՝ օգտագործելով երկրակապակցման հասակարգեր, արբանյակային պատկերներ և տեղագրական քարտեզներ: «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառները գտնվում են Հայաստանի հարավային անտառաճման շրջանում և տեղաբաշխված են Փոքր Կովկասի լեռնահամակարգի Զանգեզուրի լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ՝ ընդգրկելով Որոտան գետի և նրա վտակների ջրահավաք ավազանները, ինչպես նաև լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25° -ից բարձր թեքության լանջերը: Մինչև 15° թեքությունների վրա գտնվում է ընդհանուր տարածքի ընդամենը 2,4%-ը, իսկ 9,9%-ը 35°-ից բարձր թեքությունների վրա:

Սյունիքի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ:

Անտառային համակեցություններում բացարձակ գերակշռում են բոխի-կաղնուտային և կաղնի-բոխուտային համակեցությունները, որոնց կազմերում հիմնականում հանդիպում են թխկի, թեղի, հացենի:

Բոխու գերակշռությամբ ծառուտները հիմնականում զբաղեցնում են լեռնալանջերի միջին բարձրության հատվածները, իսկ ավելի ցածր լեռնային գոտում անտառային բուսականությունը հիմնականում ներկայացված է ցածրաբուն կաղնու ծառուտներով, որոնց կազմում զգալի մասնակցություն ունեն սրսպտուղ և սովորական հացիները, վրացական և դաշտային թխկիները: Թփերից ավելի հաճախ հանդիպում են շլորենին, սզնենին, մասրենին: Բացատներում և անտառի ենթանտառում թփերից հանդիպում են ցախակեռաս, մասրենի, հոնի, զկռենի, կտտկենի: Տարածքի անտառշրջանացման առանձնահատկություններից է հաճարենու ծառուտների բացակայությունը: Բավականին բազմազան և հարուստ է կենդանական աշխարհը, որին նպաստում են լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, աղբյուրների առատությունը և Արաքսի ավազանի մոտիկությունը: Անտառտնտեսության տարածքը պատված է մանր գետակների և գետերի ցանցով: Բոլոր գետերը և գետակներն ունեն լեռնային բնույթ, սնվում են ստորգետնյա, ձնհալքերի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ քարեր և ավազներ: Գլխավոր գետը Որոտանն է, սկիզբ է առնում ԾՄ 3045 մ բարձրությունից, որի ավազանում տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների հիմնական մասը:

Պատճառաբանական մաս. Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործունեություններն ընդգրկում է Սյունիքի անտառտնտեսության տարածքը, որը ներառում է բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները:

Տարածքի անտառտնտեսության՝ բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառհատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը՝ բուսականության այրումը կամ մաքրումը, որսագողությունը, արոտավայրերի կառավարման բացակայությունը, դրանց կանոնավոր այրումը, օրգանական և անօրգանական թափոններով կենսամիջավայրի աղտոտումը: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բնական կենսամիջավայրի խախտում և քայքայում:

Անտառի կայուն կառավարումը նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը, անտառների կայուն օգտագործմանը: Այն կնպաստի անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Անտառների վերականգնման, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման, հիմնական ռազմավարական ուղիների ապահովման, այդ թվում՝ «Հայանտառ»-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, մարդկային ռեսուրսների ուսուցողական և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանն ուղղված միջոցառումները կնպաստեն անտառի կենսամիջավայրի բարելավմանը:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառհատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության փուլում Սյունիքի մարզի Տեղ, Գորիս, Տաթև համայնքներում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Տեղ, Գորիս, Տաթև համայնքապետարաններից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Նախատեսվող գործունեության ՌԷԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ կարծիքները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

Փորձաքննական հիմնավորում.

Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ ներկայացված տարածական տվյալների և քարտեզագրական տեղեկատվության հիման վրա՝ «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի որոշակի հատված համընկնում է «Զանգեզուր» պետական արգելավայրի տարածքի հետ: Ի պատասխան տվյալ կարծիքի՝ նախաձեռնողը լրամշակված ամփոփաթերթում ներկայացրել է պարզաբանում՝ համաձայն որի «ՀՀ կառավարության 19.12.2013թ. N 1465-Ն որոշման N 5 հավելվածով սահմանված «Զանգեզուր» պետական արգելավայրի սահմանները և «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի 33-38 քառակուսիների (725 հա) մոտ 575 հեկտարով արոտավայրերն ու այլ հողերն համընկնում են:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումից՝ կառավարման պլանով սահմանված տարածքների որոշ հատվածները համընկնում են «Զանգեզուր» պետական արգելավայրերի տարածքների հետ՝ «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հիմնադրույթային փաստաթղթի ընդունումը համարվում է ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ «Ուայդ գեյթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան